



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 365 - Ա

02 հոկտեմբերի 2019 թ.

**ՎԱԼԵՐԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 164-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Վալերիկ Մինասյանի դիմումը կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վալերիկ Մինասյանին տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 2019 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 7-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները 2019 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 7-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Հայկ Սիրականյանի վրա:

3. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 8-ից:

02.10.2019



(Handwritten signature)

ՄԱՐԶՊԵՏ

ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈԴԵՔՍ: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ

✓